սովորաբար տալիս էր նրա ձեռքը մի որեւիցէ նշան, օրինակ՝ իր դանակը, «տեր-ողորմեանէ, մօրուքի սանդրը, վերջապէս մի բան, որ տանողը ցոյց էր տալիս՝ ասելով. «այդ էլ վարպետի նշանն էէ:

Երբ ճանապարհների վրայ Քրդերը պատահէին մի հայ գիւղացու, բաւական էր, որ նա ասէր, թէ ես վարպետ Փանոսի մարդն եմ, այլեւս նրան չէին դիպչի: Ի հարկէ, այդ բոլոր յարգանքները վայելում էր վարպետը այն ցեղերի կողմից, որոնց հետ նա բարեկամական յարաբերութիւնների մէջ էր, իսկ թշնամի ցեղերը ոչ միայն հայերին, այլ նոյնիսկ քրդերին կը կողոպտէին, եթէ նրանք օտար ցեղի էին պատկանում: Գողութիւնը, յափշտակութիւնը, կողոպուտը քրդերի համար ապրուստի սովորական միջոցներից մէկն է:

Մի անգամ ես հարցրի վարպետ Փանոսից.

— Ի՞նչ միտք ունի քո այդքան բարեկամութիւնը քրդերի հետ, որոնց այդքան ատում ես:

Նա պատասխանեց հայկական առածով.

— «Շան հետ բարեկամացի՛ր, բայց փայտը ձեռքումդ պատրաստ պահի՛ր»...

Վարպետ Փանոսը կարդացած մարդ էր. հայոց հին գրականութիւնը նա բաւական լաւ ուսումնասիրած էր. Եղիշէից, Թոմայ Արծրունուց նա ամբողջ գլուխներ անգիր գիտէր. իսկ Խորենացու հետ այնքան ծանօթ էր, որպէս մի հմուտ քարոզիչ, որ գիտէ, թէ Աւետարանի այսինչ գլխի այնինչ համարում ինչ է ասուած: Նրա մանկութեան օրերում յայտնի էր Ղազար վարդապետ «սքանչելագործը»: Այս տարապայման աբեղան ոչ մի վանական միաբանութեան հետ չհաշտուեցաւ, կամ աւելի ճիշտ կը լինէր ասել՝ միաբանութիւնները նրա հետ չհաշտուեցան, այն պատճառով առանձնացաւ իր տանը, եւ մի քանի մանուկներ հաւաքած իր շուրջը, սկսեց պարապել նրանց կրթութեամբ: Այդ աշակերտներից մէկն էր պատանի Փանոսը եւ յառաջադէմ աշակերտներից: Վարժապետը նրան շատ էր սիրում եւ շատ անգամ խրատում էր, որ վարդապետ չդառնայ: Այդ ժամանակ ուսում առնում էին միայն հոգեւորական դառնալու նպատակով: Պատանի Փանոսի հայրը վաղուց մեռած լինելով՝ նրա վարժապետը առանձին հոգ էր տանում նրա ապագայի համար, նշմարելով նրա մէջ բաւական հարուստ ընդունակութեաններ: Իր վարժապետի խորհրդով Փանոսը մտաւ մի ներկարարի գործարան: «ինչ որ ինձ մօտ սովորեցար, այդքանը բաւական է մի արհեստաւորի համար, — ասաց բարեսիրտ վարժապետը, երբ ճանապարհ դրեց նրան իր դպրոցից, — հիմա գնայ արհեստ սովորի՛ր, որ քեզ հաց տայ»...